

Զանգվածային ոճրագործությունների կանխարգելումը և ինքնորոշման հակամարտությունները

ՄԱՐԻՆԵ ԿԻՐԱԿՈՍՅԱՆ

Բրյուսելի անվան պետական համալսարան

Հոդվածում ուսումնասիրվում է զանգվածային ոճրագործությունների և ինքնորոշման հակամարտությունների միջև կապը: Առանձնահատուկ ընդգծվում է, որ ինքնորոշման հակամարտությունների դեպքում տարածքի կարգավիճակի անորոշությունը և միջազգային ճանաչման բացակայությունը զգալիորեն մեծացնում են այդ հանցագործությունների կատարման վտանգը: Ուստի, ռիսկերի գնահատման մեխանիզմները, մասնավորապես, զանգվածային ոճրագործությունների կանխարգելմանն ուղղված վերլուծության շրջանակը (այսուհետ՝ Շրջանակ) կարող են լինել արդյունավետ այդ հանցագործությունների կանխատեսման և դրանց կանխարգելման համար: Մեխանիզմը կարող է կիրառական նշանակություն ունենալ նաև Արցախյան հակամարտության շրջանակներում: Քանի դեռ չկա Արցախի Հանրապետության միջազգային ճանաչում, մշտապես կլինի մետրոպոլիայի կողմից նոր հանցագործությունների կատարման հավանականություն: Հոդվածում եզրակացվում է, որ Շրջանակը կարող է արդյունավետ ծառայել իր նպատակին, եթե այն կիրառելիս հաշվի առնվի կոնկրետ միջավայրի առանձնահատկությունները և եթե հաստատվի սերտ համագործակցություն տեղական իշխանությունների և համապատասխան միջազգային մարմինների, ինչպես նաև տեղական իշխանությունների և ոլորտի մասնագետների միջև:

Բանալի բառեր

Զանգվածային ոճրագործություններ, ինքնորոշման հակամարտություններ, կանխարգելում, Արցախյան հակամարտություն

Ներածություն

20-րդ դարի երկրորդ կեսին և 21-րդ դարի առաջին կեսին աշխարհի տարբեր ծայրերում արձանագրվեցին զանգվածային ոճրագործությունների դեպքեր, այդ թվում՝ Բանգլադեշում, Կամբոջայում, Ռուանդայում, նախկին Հարավսլավիայում, Արևելյան Թիմորում,

Իրաքում, Սոմալիում, Արևմտյան Սահարայում և վերջերս՝ Արցախի Հանրապետությունում:

Սառը պատերազմի շրջանում միջազգային հանրության դերն առանձնահատուկ սահմանափակ էր հակամարտությունների կարգավորման գործում՝ Միացյալ Նահանգների և Խորհրդային Միության միջև թշնամանքի, ինչպես նաև միջազգային իրավունքում գերակայող նորմերի պատճառով: Թեև հետսառըպատերազմյան շրջանում ՄԱԿ-ի՝ որպես «գլոբալ կանխարգելիչ ուժի» նկատմամբ հույսը վերականգնվեց, կարճ ժամանակ անց այն հողս ցնդեց՝ 1990-ականների սկզբին իրականացված ցեղասպանությունների լույսի ներքո:

Զանգվածային ոճրագործությունների զգալի մասն իրականացվում է ինքնորոշման հակամարտությունների շրջանակում՝ որպես ժողովուրդների ինքնորոշման իրավունքի իրացումը ճնշելու միջոց: Դա հաճախ բխում է տևական ժամանակ տարածքի անորոշ կարգավիճակի պահպանումից՝ այդպիսով մեծացնելով մետրոպոլիայի կողմից զանգվածային ոճրագործությունների կատարման հնարավորությունը: Պատահական չէ, որ մի շարք դեպքերում կարգավիճակի հարցի ստորադասումն այլ հարցերին հանգեցրել է զինված բախումների վերսկսմանը: Միայն այն բանից հետո, երբ հակամարտության կարգավորման ռազմավարությունը վերանայվել է (կարգավիճակը ստացել է առաջնային նշանակություն), հնարավոր է եղել ապահովել անգամ ժողովրդի ֆիզիկական անվտանգությունը: 2020թ. Ադրբեջանի սանձազերծած պատերազմը միջազգային իրավունքի նորմերին համապատասխան իր ինքնորոշման իրավունքն իրացրած, սակայն միջազգային ճանաչում չունեցող Արցախի ժողովրդի նկատմամբ մետրոպոլիայի իրականացրած զանգվածային ոճրագործության օրինակ է:

Զանգվածային ոճրագործությունների կանխարգելումն ունի առանցքային նշանակություն ոչ միայն պետական, այլև տարածաշրջանային անվտանգության և կայունության պահպանման տեսանկյունից: Կանխարգելումն առաջ է բերում ավելի քիչ մարտահրավերներ ու ռիսկեր, քան կոնկրետ դեպքին անմիջական արձա-

զանքումը: Այն կարող է վերացնել կամ նվազեցնել ցեղասպանության կամ զանգվածային ոճրագործության այլ տեսակների պատճառները: Այդ տեսանկյունից Ցեղասպանության կանխարգելման հարցերով ՄԱԿ-ի գրասենյակի և «Պաշտպանելու պատասխանատվության» սկզբունքի հարցերով հանձնաժողովի համատեղ մշակած Շրջանակը կարող է ծառայել որպես արդյունավետ գործիք՝ զանգվածային ոճրագործությունների ռիսկերի գնահատման համար: Հողվածի նպատակն է բացահայտել զանգվածային ոճրագործությունների և ինքնորոշման հակամարտությունների միջև կապը՝ ինքնորոշվող տարածի անորոշ կարգավիճակի հիմնական ռիսկերի ու դրանց կանխարգելման մեխանիզմների ներկայացման ճանապարհով:

Զանգվածային ոճրագործություններին արձագանքման միջազգային փորձը

«Զանգվածային ոճրագործություններ» եզրույթը վերաբերում է միջազգայնորեն սահմանված երեք հանցագործությունների՝ ցեղասպանություն, մարդկության դեմ ուղղված հանցագործություններ և պատերազմական հանցագործություններ: Դրանք համարվում են մարդկության դեմ ուղղված առավել լուրջ հանցագործությունները, որոնք ունեն միջազգային հանցագործությունների կարգավիճակ: Միջազգային իրավունքի համաձայն, **ցեղասպանությունը** հանցագործություն է ազգային, էթնիկ, ռասայական կամ կրոնական խմբի անդամների նկատմամբ: Թեև այդ հանցագործության զոհերն անհատներ են, սակայն նրանք թիրախավորվում են այդ խմբերից որևէ մեկին պատկանելու պատճառով: **Մարդկության դեմ հանցագործությունները** վերաբերում են այն գործողություններին, որոնք քաղաքացիական բնակչության դեմ ուղղված լայնածավալ կամ համակարգային հարձակումների մաս են կազմում: Ոչ քաղաքացիական անձինք ևս կարող են դառնալ այդ հարձակումների զոհ, սակայն որպեսզի տվյալ գործողությունը համարվի մարդկության դեմ ուղղված հանցագործություն, հարձա-

կումների հիմնական թիրախը պետք է լինի քաղաքացիական բնակչությունը: **Պատերազմական հանցագործությունների** թիրախները տարբեր են. կարող են լինել ինչպես քաղաքացիական, այնպես էլ ոչ քաղաքացիական անձինք: Միջազգային զինված բախումների ժամանակ զոհերի թվում են այն անձինք, ովքեր առանձնահատուկ պաշտպանված են միջազգային սովորության իրավունքի փաստաթղթերով¹:

Միջազգային հանրությունը ոչ միայն բարոյական պատասխանատվություն է կրում կանխարգելելու այդ հանցագործությունները, այլև կանխարգելելու պարտականությունը սահմանված է ինչպես մի շարք համաձայնագրերով, այնպես էլ պետությունների համար պարտադիր միջազգային մարդասիրական իրավունքի նորմերով: Այդ պարտականությունը վերահաստատվել է 2005թ. ՄԱԿ անդամ պետությունների ստանձնած քաղաքական հանձնառությամբ՝ «պաշտպանելու պատասխանատվության²» սկզբունքի շրջանակներում:

Զանգվածային ոճրագործությունների կանխարգելումը կարևոր է ոչ միայն պետական անվտանգության, այլև տարածաշրջանային և միջազգային կայունության ու անվտանգության պահպանման տեսանկյունից: Այդ հանցագործությունները կարող են չսահմանափակվել ազգային սահմաններով և ներթափանցել հարևան երկրներ, օրինակ, ստեղծելով կամ մեծացնելով լարվածությունը կրոնական կամ էթնիկ բաժանարար գծերով: Բացի այդ, վաղ փուլերում միջազգային արձագանքի մարտահարվերներն ու քաղաքական «կորուստներն» ավելի քիչ են, քան այն դեպքում, երբ արդեն ստեղծվել է սուր ճգնաժամային իրավիճակ: Ընդհանուր առմամբ, մարդասիրական ճգնաժամերի լուծումը և հետկոնֆլիկ-

¹ Framework of Analysis for Atrocity Crimes: A Tool for Prevention, United Nations 2014, https://www.un.org/en/genocideprevention/documents/atrocity-crimes/Doc.49_Framework%20of%20Analysis%20for%20Atrocity%20Crimes_EN.pdf.

² Report of the International Commission on Intervention and State Sovereignty, The Responsibility to Protect, December 2001.

տային պետություններում ու տարածքներում տևական խաղաղության հաստատումը կարող են տևել տարիներ³:

Սառը պատերազմի շրջանում միջազգային համայնքը՝ ՄԱԿ-ի գլխավորությամբ, գերակշիռ դեպքերում անկարող էր արձագանքել ծանր հանցագործությունների դեպքերին՝ Միացյալ Նահանգների և Խորհրդային Միության միջև թշնամանքի պատճառով: Բացի այդ, այս շրջանում այլ պետությունների գործերին ռազմական միջամտությունը, անկախ պատճառների հիմնավորվածությունից, համարվում էր չմիջամտության նորմի խախտում: Սառըպատերազմյան շրջանում արձանագրվեցին առանձին պետությունների միջամտության երեք նշանակալի դեպքեր՝ Հնդկաստանի միջամտությունն Արևելյան Պակիստանում (1971), Տանզանիայի միջամտությունն Ուգանդայում (1978), Վիետնամի միջամտությունը Կամբոջայում (1979)⁴: Միջազգային հանրության լուր արձագանքը ցեղասպանությանը առավել ողբերգական դրսևորում ունեցավ Կամբոջայի դեպքի առնչությամբ: Միայն Վիետնամի միջամտության արդյունքում տապալվեց ցեղասպան քաղաքականություն վարող Խմեր Ռուժի ռեժիմը: Միաժամանակ, հատկանշական է այն հանգամանքը, որ դա ոչ միայն միջազգայնորեն որակվեց որպես չմիջամտության նորմի խախտում, այլև ՄԱԿ Գլխավոր ասամբլեան տևական ժամանակ շարունակում էր ճանաչել տապալված Խմեր Ռուժի կառավարությունը⁵:

ՄԱԿ-ի՝ որպես «գլոբալ կանխարգելող ուժի», նկատմամբ հույսը վերականգնվեց Սառը պատերազմի ավարտից հետո: Այդ շրջանին բնորոշ էին «անկայունությունն ու կոնֆլիկտները նախկին խորհրդային տարածքում, էթնիկ և կրոնական վեճերը, հումանիտար աղետներն ու արտակարգ իրավիճակները նոր զարգացող երկրներում, որտեղ քաղաքացիական անկարգությունները

³ Framework of Analysis...

⁴ **Wheeler N.J., and Morris J.**, Humanitarian Intervention and State Practice at the End of the Cold War In: *Fawn R., and Larkins J., International Society After the Cold War*, Basingstoke, Macmillan Press, 1996.

⁵ **Gallagher A.**, *Genocide and Its Threat to Contemporary International Order*, UK, Palgrave Macmillan, 2013, p. 107.

գտնվում էին վերահսկողությունից դուրս, ինչպես նաև ավելի մեծ թվով պատերազմներ և ուղիղ առճակատումներ, քան նախորդ կես դարի ընթացքում, որոնք ուղեկցվում էին գերտերությունների միջև աճող կոշտ մրցակցությամբ⁶։ Նոր մարտահրավերին և սպառնալիքներին ընդառաջ, 1992թ. հունվար ամսին տեղի ունեցավ Անվտանգության խորհրդի գագաթաժողովը՝ Գլխավոր քարտուղարին ուղղված խնդրանքով՝ ներկայացնել ՄԱԿ-ի խաղաղապահ գործունեության մասին զեկույց:

Մի քանի ամիս անց Գլխավոր քարտուղար Բուտրոս Ղալին ներկայացրեց «Խաղաղության օրակարգ» զեկույցը: Դրանում նախանշվում էր միջազգային խաղաղության պահպանման գործում ՄԱԿ-ի դերակատարության հավակնոտ տեսլականը՝ չորս տեսակի գործողությունների միջոցով՝ կանխարգելող դիվանագիտություն նախքան վեճերի սրումը, ՄԱԿ Կանոնադրության 7-րդ գլխի համաձայն խաղաղության հաստատում, երբ հակամարտող կողմերը չեն կարողանում գալ համաձայնության և հետևյալ ֆիլիտային խաղաղության հաստատում⁷: Սակայն լայնամասշտաբ ձախողումն ակնհայտ դարձավ կարճ ժամանակ անց՝ 1994թ. Ռուանդայի ցեղասպանության և 1995թ. Սրեբրենիցայի (Բոսնիա) զանգվածային կոտորածների համատեքստում⁸:

Տարբեր հասարակական կազմակերպություններ, ՄԱԿ-ի հատուկ զեկուցողներ ու դիվանագետներ նախազգուշացնում էին Ռուանդայում ցեղասպանության նշանների մասին դեպքից դեռևս մեկ տարի առաջ: Այդուհանդերձ, Ռուանդայում ստեղծված իրավիճակը միջազգայնորեն դիտարկվում էր որպես լուծված հակամարտություն՝ մատնանշելով խաղաղության գործընթացի մեկնարկը: Միաժամանակ, փոխհամաձայնեցված խաղաղության ծրագիրը

⁶ **Ariye E.**, A Bystander to Genocide: Revisiting UN Failure in the Balkans and Rwanda, *European Scientific Journal*, 2011, **11**, 11, 325-333.

⁷ **Boutros-Ghali B.**, An Agenda for Peace Preventive Diplomacy, Peacemaking and Peace-keeping, 17 June 1992, <https://digitallibrary.un.org/record/145749?ln=ru>.

⁸ **Nanda V. et al.**, Tragedies in Somalia, Yugoslavia, Haiti, Rwanda and Liberia - Revisiting the Validity of Humanitarian Intervention under International Law - Part II, *Denver Journal of International Law and Policy*, **26**, 5, 2020, 826-835.

(1993թ. ստորագրված Արուշայի համաձայնագրերը) անհրաժեշտ էր միջազգայնորեն վերահսկել և իրականացնել: Գործնական քայլեր չձեռնարկվեցին նույնիսկ այն ժամանակ, երբ Ռուանդայում տեղակայված ՄԱԿ-ի խաղաղապահ առաքելությունը (ՄԱԿ-ի աջակցության առաքելությունը Ռուանդայում կամ UNAMIR) տազնապալի զեկույցներ էր ուղարկում Նյու Յորք՝ հայցելով ընդլայնել առաքելության մանդատը՝ ծայրահեղականներին ավելի արդյունավետ հակազդելու նպատակով: Սակայն, ավանդական չեզոք խաղաղարարի տեսլականը և ուժային գործողությունների միջոցով ցեղասպանությունն սանձազերծողների դեմ պայքարից հրաժարումը, ինչպես պահանջում էին UNAMIR-ի հրամանատարը և Բելգիայի կառավարությունը, ի վերջո հանգեցրեցին ցեղասպանության⁹:

Նախկին Հարավսլավիայում միջազգային դերակատարների գործունեությունը ևս զգալիորեն պասիվ էր այն ամբողջ ընթացքում, երբ երկիրը կազմալուծվում էր և տեղի էին ունենում էթնիկ զտումներ Խորվաթիայի և Բոսնիա-Հերցեգովինայի պատերազմներում: Բոսնիայում քաղաքացիական անձանց նկատմամբ բռնությունները կրում էին լայնամասշտաբ բնույթ: Դրանք հասան իրենց գագաթնակետին 1995թ. հուլիս ամսին, երբ սերբական զինված ուժերն առաջացան Սրեբրենիցայում գտնվող ՄԱԿ-ի հոչակած «Անվտանգ տարածքի» ուղղությամբ, չեզոքացրեցին խաղաղապահներին և իրականացրեցին բոսնիացի մահմեդականների ջարդերը: Դա որակվեց որպես Հոլոքոստից հետո Եվրոպայում տեղի ունեցած առավել սարսափելի ջարդը, իսկ հետագայում նախկին Հարավսլավիայի հարցերով Միջազգային քրեական տրիբունալի կողմից ճանաչվեց որպես ցեղասպանություն¹⁰:

Ռուանդայում և Բոսնիայում արձանագրված ձախողումները հանգեցրեցին միջազգային համայնքի ավելի վճռական գործողությունների՝ ուղղված զանգվածային ոճրագործությունների դադա-

⁹ **Grünfeld F., Vermeulen V.**, Failures to Prevent Genocide in Rwanda (1994), Srebrenica (1995), and Darfur (Since 2003), *Genocide Studies and Prevention*, 4, 2, 2009, 221-237.

¹⁰ **Straus S.**, Fundamentals of Genocide and Mass Atrocity Prevention, US, US Holocaust Memorial Museum, 2016, p. 6.

րեցմանը: Քաղաքացիական բնակչությանը պաշտպանելու նպատակով ինքնիշխան պետության ներքին գործերին ռազմական միջամտությունը դարձավ ոչ թե բացառություն, այլ բնականոն երևույթ միջազգային հարաբերություններում¹¹: Կոսովոյում իրականացվող զանգվածային սպանություններին ի պատասխան, ՆԱՏՕ-ն նախաձեռնեց լայնամասշտաբ օդային հարձակում Բոսնիայի սերբերի դիրքերի ուղղությամբ: Նպատակն էր ստիպել սերբերին դադարեցնել մուսուլմանական տարածքների շրջափակումը և համաձայնվել բանակցել պատերազմի ավարտի շուրջ: 1995թ. նոյեմբերին Դեյթոնում հակամարտող կողմերը պայմանավորվեցին դադարեցնել կրակը, և ՆԱՏՕ-ի զորքերը տեղակայվեցին Բոսնիայում՝ խաղաղությունը վերահսկելու նպատակով¹²:

Այդ զարգացումներից հետո Ռուանդայի ցեղասպանության ժամանակ ՄԱԿ-ի խաղաղապահ գործողությունների վարչության ղեկավարը, իսկ Կոսովոյի ճգնաժամի ժամանակ ՄԱԿ-ի գլխավոր քարտուղարը Քոֆի Անանն իր հայտնի «Մենք՝ ժողովուրդներս» զեկույցում ընդգծում էր մարդասիրական միջամտության դիլեման՝ հետևյալ հարցադրմամբ. «Եթե մարդասիրական միջամտությունն իսկապես անընդունելի հարձակում է պետության ինքնիշխանության դեմ, ապա ինչպե՞ս պետք է արձագանքենք Ռուանդայի և Սրբերենիցայի նման դեպքերին, երբ տեղի են ունենում մարդու իրավունքների կոպիտ և պարբերական խախտումներ...¹³»: Այդ հարցադրմանը պատասխանելու նպատակով կարճ ժամանակ անց ձևավորվեց Միջամտության և պետական ինքնիշխանության հարցերով միջազգային հանձնաժողովը: 2001թ. Հանձնաժողովը ներկայացրեց «Պաշտպանելու պատասխանատվություն» զեկույցը¹⁴, որում հեղինակներն առաջարկում էին ինքնիշխանության

¹¹ **Alexander K.**, NATO's Intervention in Kosovo: The Legal Case for Violating Yugoslavia's "National Sovereignty" in the Absence of Security Council Approval, *Houston Journal of International Law*, 2000, **22**, 3, 1-41.

¹² **Straus S.**,..., p. 7.

¹³ Kofi Annan, *We the Peoples*, UN, 2000,

https://www.un.org/en/events/pastevents/pdfs/We_The_Peoples.pdf.

¹⁴ Report of the International Commission...

բացարձակ ընկալումից անցում կատարել պայմանական ինքնիշխանությանը: Ձեկույցում ընդգծվում էր, որ ինքնիշխանությունը ենթադրում է պետությունների՝ իրենց բնակչությանը պաշտպանելու պատասխանատվություն: Այն դեպքում, երբ պետությունն ի վիճակի չէ կատարել այդ պարտականությունը, ապա այն մեխանիկորեն անցնում է միջազգային համայնքին: Այդ դեպքերում միջազգային դերակատարները կարող են գործի դնել դիվանագիտական և նույնիսկ հարկադրական միջոցներ՝ վտանգի տակ գտնվող բնակչությանը պաշտպանելու նպատակով:

Ուստի, ի տարբերություն սառըպատերազմյան և վաղ հետսառըպատերազմյան շրջանների, ներկայումս ձևավորված են ավելի հստակ ռազմավարական շրջանակներ, մեխանիզմներ ու ինստիտուտներ (ՄԱԿ-ի գրասենյակները, Միջազգային քրեական դատարանը, զանգվածային ոճրագործությունների հարցերով զբաղվող ոչ կառավարական կազմակերպությունները և այլն)՝ զանգվածային ոճրագործությունները կանխարգելելու կամ դրանց համարժեք արձագանքելու նպատակով¹⁵: Միաժամանակ, արդյունավետ կանխարգելումը կամ դեպքին անմիջական արձագանքումը, բացի քաղաքական կամքից, պահանջում են հակամարտության միջավայրի, դրա պատմության, ինչպես նաև այն գործոնների մանրակրկիտ ուսումնասիրություն, որոնք կարող են հրահրել զանգվածային ոճրագործություններ:

Զանգվածային ոճրագործությունները և ինքնորոշման հակամարտությունները

Զանգվածային ոճրագործությունները գերակշիռ դեպքերում իրականացվել են զինված հակամարտությունների ընթացքում: 1945 թվականից ի վեր դիտարկված զանգվածային սպանությունների 103 դեպքերից 69-ը (67%) տեղի է ունեցել զինված հակամարտությունների համատեքստում, 34-ը (33%)՝ դրանից դուրս: Նախքան 1980թ. խաղաղ պայմաններում տեղի ունեցած բոլոր դեպքերը բացառու-

¹⁵ Straus S.,... p. 114.

թյամբ հինգի և դրանից հետո արձանագրված նոր դեպքերի միայն 15 տոկոսն է տեղի ունեցել զինված հակամարտության շրջանակներից դուրս: Դրանցից չորսը տեղի է ունեցել այն երկրներում, որոնք անցյալում ներքաշված են եղել զինված հակամարտության մեջ, որի ժամանակ տեղի են ունեցել զանգվա-ծային ոճրագործություններ (Բուրունդի (երկու անգամ), Կոնգոյի Ժողովրդավարական Հանրապետություն և Մյանմար)¹⁶: Հաշվի առնելով այդ վիճակագրությունը՝ կարելի է պնդել, որ հակամարտության կանխարգելումը և ոճրագործությունների կանխարգելումը փոխլրացնող են: Եթե զինված հակամարտությունը խնդիրների լուծման բռնի միջոց է, ապա ակնհայտ է, որ այդ փուլում զանգվածային ոճրագործությունների ռիսկերը զգալիորեն մեծանում են¹⁷: Արդյունավետության ապահովման համար քաղաքականություն մշակողները պետք է առաջնորդվեն ոճրագործությունների կանխարգելման պրիզմայով, որը տարբեր է հակամարտությունների կանխարգելման մոտեցումից՝ իր ինտենսիվությամբ, նպատակներով և թիրախներով (Աղյուսակ 1):

Աղյուսակ 1. Հակամարտության կանխարգելման և ոճրագործության կանխարգելման համեմատություն¹⁸

	Սահմանում	Թիրախներ	Միջամտության նպատակներ
Հակամարտության կանխարգելում	Երկու կամ ավելի զինված խմբավորումների միջև պատերազմը կանխելուն, զսպելուն	Պետական և ոչ պետական զինված դերակատարներ	Ստանձնել միջնորդական առաքելություն զինված խմբավորումների միջև և խրախուսել կոնֆլիկտի ոչ ռազմական լուծում գտնելը

¹⁶ **Bellamy A.**, Mass Atrocities and Armed Conflict: Links, Distinctions and Implications for the Responsibility to Prevent, The Stanley Foundation, Policy Analysis Brief, February 2011.

¹⁷ **Dieng A., Welsh J.**, Assessing the Risk of Atrocity Crimes, *Genocide Studies and Prevention*, 2016, 9, 3, 4-12.

¹⁸ **Straus S.**,...

	ն/կամ մեղմելուն ուղղված ջանքեր		
Ոճրագործության կանխարգելում	Հակամարտային իրավիճակում կամ դրանից դուրս գտնվող քաղաքացիական անձանց նկատմամբ բռնություննր կանխելուն, զսպելուն ն/կամ մեղմելուն ուղղված ջանքեր	Քաղաքացիական անձինք	Խոչընդոտել կամ արգելափակել հանցագործների՝ քաղաքացիական անձանց վնաս պատճառելու մտադրությունը

Ինչպես նշում է Բելամին, բոլոր տեսակի կառավարությունները կարող են ոճրագործություններ կատարել զինված հակամարտությունների ժամանակ, եթե համարեն, որ խաղաղությունները բավական բարձր են և ի վիճակի չլինեն հաղթանակ տանել՝ ողջամիտ կորուստներով ու ավանդական միջոցների կիրառման ճանապարհով¹⁹:

Խաղաղությունները գրեթե միշտ բարձր են ինքնորոշման հակամարտությունների ժամանակ, որոնց դեպքում տարածքի կարգավիճակի անորոշության պահպանումը կարող է առաջ բերել լուրջ սպառնալիքներ: Պատմականորեն, ինքնորոշման իրավունքի իրացումը կամ դրա փորձերը գերակշիռ դեպքերում հանգեցրել են ինքնորոշվող ժողովրդի նկատմամբ բռնության կամ հարկադրանքի: Այդ համատեքստում ինքնորոշման հայտ ներկայացրած տարածքի միջազգային ճանաչումը հաճախ դիտարկվում է որպես միակ լուծում տարբեր խնդիրների համար, մասնավորապես, մարդու իրավունքների ոտնահարման դեպքեր, մշակութային ճնշումներ,

¹⁹ Նույն տեղում:

տնտեսական շահագործում, մշտական զինված բախումներ, համայնքի բնաջնջման սպառնալիք և այլն²⁰:

Օրինակների թվում են Արևելյան Թիմորում 1999թ. Անկախության հանրաքվեին հաջորդած զանգվածային ջարդը, որը հաճախ որակվում է որպես ցեղասպանություն, նույն թվականին Կոսովոյում իրականացված լայնածավալ սպանությունները, որոնք ավարտվեցին ՆԱՏՕ-ի միջամտությամբ, ինչպես նաև 2004թ. վերսկսված բախումները, Հարավային Սուդանի քաղաքացիական պատերազմները, 2020թ. Արցախյան պատերազմը և այլն:

Զանգվածային ոճրագործությունների և ինքնորոշման հակամարտությունների վերաբերյալ գրականության մեջ կան երկու հիմնական դիլեմաներ: Նախ, կա տեսակետ, որ ցեղասպանության մասին հայտարարությունները հաճախ օգտագործվում են որպես գործիք համեմատաբար թույլ անջատողական միավորների համար, ովքեր պայքարում են բանակցային գործընթացում իրենց դիրքերն ամրապնդելու և միջազգային իրավական կարգավիճակ ձեռք բերելու համար: Նշվում է, որ այդ դեպքերում զանգվածային ոճրագործությունների (մասնավորապես՝ ցեղասպանության) վերաբերյալ մեղադրանքները կարող են լինել չափազանցված կամ հրահրվել ինքնորոշման շարժման առաջնորդների կողմից: Հետևաբար, մարդու իրավունքների խախտումների մասին հայտարարությունները կարող են դառնալ հաղթաթուղթ նրանց ձեռքում²¹: Միաժամանակ, այդ պնդումները թվում են ոչ այդքան արդարացված՝ միջազգային քննչական մարմինների (ՄԱԿ-ի կողմից լիազորված հետաքննչական հանձնաժողովներ, փաստահավաք առաքելություններ և հետաքննություններ) առկայության պայմաններում, որոնք ստեղծվել են միջազգային մարդասիրական իրավունքի կոպիտ խախտումների հետաքննության (անկախ նրանից դրանք ունեն տևական բնույթ, թե առաջ են եկել անսպասելի իրադարձությունների արդյունքում) այդ խախտում-

²⁰ Self-Determination Conflicts, *The Adelphi Papers*, 1993, 33, 283, 32-48.

²¹ Grodsky B., When Two Ambiguities Collide: The Use of Genocide in Self-Determination Drives, *Journal of genocide Research*, 2012, 14, 1, 1-27.

ների համար պատասխանատվության ենթարկելու գործընթացի խթանման և անպատժելիության դեմ պայքարի համար²²: Այլ հարց է, թե որքանով է արդյունավետ դրանց աշխատանքը կամ թե արդյոք այդ առաքելությունների բազմաթիվ նախագուշացումներն ու զեկույցները ճիշտ ժամանակին ստանում են գործնական լուծումներ: .

Երկրորդ դիլեման վերաբերում է «անջատում հանուն փրկության» (remedial seccession) «դուրսբերում»: Վերջինս կիրառվում է այն ժողովուրդների առնչությամբ, ովքեր բախվում են ծայրահեղ դրսևորումների՝ ուղղված իրենց ինքնորոշման իրավունքի խոչընդոտմանը: Ըստ այդ մոտեցման, խումբը կարող է անջատվել այն դեպքում, երբ ենթարկվում է զանգվածային ոճրագործության մետրոպոլիայի կողմից: Միաժամանակ, միայն այն փաստը, որ չկան նման եզրույթի իրավական ամրագրում և սահմանում միջազգային իրավունքում, բավարար է պնդել, որ այն չի կարող համարվել որպես պարտադիր իրավական նորմ: Կան միայն մի շարք մասնագիտական հոդվածներ, որոնք դիտարկում են այդ մոտեցումը բարոյական և քաղաքական տեսակետից, քանի որ անկախության ճանաչումը՝ հիմնված ժողովուրդների ինքնորոշման իրավունքի վրա, միակ ողջամիտ լուծումն է մետրոպոլիայի կողմից ռազմական ագրեսիայի ենթարկված ինքնորոշվող ժողովրդի անգամ ֆիզիկական անվտանգությունն ապահովելու համար: Պատահական չէ, որ ինքնորոշման իրավունքի հիման վրա անկախության ճանաչման վերջին դեպքերի (Արևելյան Թիմոր, Կոսովո և այլն) վերաբերյալ կարգավիճակի արագ և միջազգային հանրության կողմից պարտադրված որոշումը (ճանաչումը) հենց դրանով է պայմանավորված²³:

²² International Commissions of Inquiry, Commissions on human rights, Fact-Finding Missions and other Investigations, UN Human Rights Council, <https://www.ohchr.org/EN/HRBodies/HRC/Pages/COIs.aspx>.

²³ **Թորոսյան Տ.**, Զինադադարից հետո. Միակ իրական լուծումը Արցախի միջազգային ճանաչումն է, 10 հոկտեմբերի 2020, Լույս հիմնադրամ, <https://www.luys.am/img/artpic/small/b447321f61f5dda9502d%D4%B6%D5%AB%D5%B6%D5%A1%D5%A4%D5%A1%D5%A4%D5%A1%D6%80%D5%AB%D6%81-%D5%B0%D5%A5%D5%BF%D5%B8.pdf>.

Յուրաքանչյուր ինքնորոշման հակամարտություն ունի իր առանձնահատկությունները և տարբեր արտաքին գործոններ, որոնք ազդում են ճանաչման գործընթացի վրա: Միաժամանակ, այդ հակամարտությունների մանրակրկիտ ուսում-նասիրության²⁴ արդյունքում կարելի է արձանագրել մի քանի ընդհանուր հատկանիշ. 1) գրեթե բոլոր ինքնորոշման հակամարտությունների դեպքում մետրոպոլիան ընդդիմացել է ինքնորոշման հայտ ներկայացրած ժողովրդի անկախացման տարբերակին, 2) հակամարտության որոշակի փուլում մետրոպոլիան կիրառել է բռնություն (ագրեսիայից մինչև ցեղասպանություն) ինքնորոշվող ժողովրդի նկատմամբ, 3) գրեթե բոլոր դեպքերում հակամարտության կարգավորմանը (անկախության ճանաչմանը) հանգեցրել են ոչ թե բանակցությունները, այլ միջազգային համայնքի ճնշումները:

Վերոնշյալ օրինաչափությունները լավագույնս տեսանելի են Կոսովոյի և Արևելյան Թիմորի հակամարտությունների առնչությամբ: Ավելի քան 20 տարի Ինդոնեզիան իրականացնում էր Արևելյան Թիմորի կառավարումը՝ որպես իր տարածքի մի մաս՝ բանեցնելով հսկայական ճնշումներ տարածքի բնակչության վրա: Թեև զանգվածային ոճրագործությունների վերաբերյալ հաղորդումներ պարբերաբար ստացվում էին, սակայն միջազգային հանրությունը որևէ կերպ չէր արձագանքում տեղի ունեցող իրադարձություններին՝ դա որակելով որպես ներպետական իրավասության շրջանակներում գտնվող խնդիր²⁵: Միայն 1999թ., երբ ՄԱԿ-ը Ինդոնեզիայի իշխանություններին սպառնաց, որ շարունակվող բռնության և հանրաքվեի ճանապարհին խոչընդոտներ ստեղծելու դեպքում երկիրը պաշտոնապես կճանաչվի որպես ցեղասպանություն իրականացնող և կսահմանվեն կոշտ պատժամիջոցներ, Ինդոնեզիան համաձայնվեց տարածքում հանրաքվե

²⁴ **Թորոսյան Ս.**, Լեոնային Ղարաբաղ և Կոսովո. Հակամարտություններ, բանակցություններ, աշխարհաքաղաքականություն, Երևան, Տիգրան Մեծ հրատ., 2012, **Թորոսյան Ս.**, Զինադադարից հետո...

²⁵ **Fernandes C.**, Accomplice to Mass Atrocities: The International Community and Indonesia's Invasion of East Timor, *Politics and Governance*, 2015, 3, 4, 1-11.

անցկացնելուն: Նույն կերպ, Կոսովոյի կարգավիճակի անորոշությունը նոր բախումների հանգեցրեց 2004թ. մարտին՝ «Չափանիշներ նախքան կարգավիճակը» ռազմավարության ներկայացումից հետո: 2004թ. արյունալի բախումներից հետո ՄԱԿ Գլխավոր քարտուղարի հատուկ ներկայացուցիչը ներկայացրեց համապարփակ գեկույց, որի կենտրոնական գաղափարն այն էր, որ հակամարտության լուծման ցանկացած ուղի, բացի անկախությունից, հղի է ծանր հետևանքներով²⁶: Հետագա զարգացումների արդյունքում ավելի քան 100 ՄԱԿ անդամ պետություններ ճանաչեցին Կոսովոյի անկախությունը (առանց նոր հանրաքվեի):

Զանգվածային ոճրագործությունների կանխարգելման վերլուծության շրջանակը և դրա կիրառման նախապայմաններն ինքնորոշման հակամարտությունների դեպքում

Զանգվածային ոճրագործությունները հազվադեպ են լինում առանձին, ոչ շրթայական իրադարձություններ, որոնք տեղի են ունենում կարճ ժամանակամիջոցում: Դրանք, որպես կանոն, դիմադրելի գործընթացներ են և պահանջում են ժամանակ, լավ պլանավորում և հսկայական ռեսուրսներ: Այդ հանցագործությունների սանձազերծման համար նպաստավոր պայմանների ստեղծումը կարող է տևել տարիներ և նույնիսկ տասնամյակներ: Ոճրագործություններին մեծամասամբ նախորդում են մարդու իրավունքների համեմատաբար փոքրամասշտաբ կամ համակարգային խախտումները:

Ոճրագործությունների կանխարգելման քաղաքականության շրջանակներում առանձնացնում են կանխարգելումը և դեպքին անմիջական արձագանքումը: Կանխարգելումը վերաբերում է այն գործողություններին, որոնք նվազեցնում են ոճրագործությունների կատարման հավանականությունը: Նպատակն է ձեռնարկել այնպի-

²⁶ Report of the Special Envoy of the Secretary-General on Kosovo's Future Status, UN Doc. S/2007/168, 26 March, 2007, <http://www.unosek.org/docref/report-english.pdf>.

սի քայլեր, որոնք վերացնում կամ նվազեցնում են ցեղասպանության կամ զանգվածային ոճրագործության այլ ձևերի առանցքային պատճառները: Ի տարբերություն դրան, անմիջական արձագանքումը վերաբերում է այն գործողություններին, որոնց նպատակն է վերացնել կամ նեղացնել ոճրագործությունների շրջանակը, երբ դրանք արդեն ընթացքի մեջ են: Արձագանման միջոցները, որպես կանոն, ծառայում են երկու նպատակի: Դրանք ուղղված են 1) կա՛մ համոզելու պոտենցիալ հացագործներին զերծ մնալ ոճրագործություններից՝ օգտագործելով հարկադրական կամ ոչ հարկադրական միջոցներ, կա՛մ 2) զգալիորեն սահմանափակելով հանցագործների՝ քաղաքացիական անձանց նկատմամբ բռնություն գործադրելու կարողությունը՝ ուղղակիորեն պաշտպանելով քաղաքացիական անձանց կամ սահմանափակելով հանցագործների՝ նրանց վնասելու հնարավորությունները²⁷: Կանխարգելումն ակնհայտորեն ավելի շահավետ է, քանզի փոփոխությունները կարող են ազդել ամբողջ միջավայրի կառուցվածքի վրա: Որոշ փորձագետներ այդ միջոցներն անվանում են հորիզոնական միջամտություններ²⁸:

Բավական բարդ է տարբերակել այն հակամարտությունները, որոնց դեպքում զանգվածային ոճրագործությունների հավանականությունն ավելի մեծ է: Այդ նպատակով առաջնային նշանակություն ունի կոնկրետ հակամարտության առանցքային պատճառների խորքային ուսումնասիրությունը և ռիսկերի գնահատումը: Այդ խնդրի լուծման համար Ցեղասպանության կանխարգելման և պաշտպանելու պատասխանատվության հարցերով ՄԱԿ-ի հատուկ խորհրդատուների գրասենյակը 2014թ. ներկայացրեց զանգվածային ոճրագործությունների վերլուծության շրջանակը²⁹, որպես զանգվածային ոճրագործության ռիսկերի գնահատման ուղեցույց:

²⁷ **Straus S.**, Fundamentals of Genocide...

²⁸ Նույն տեղում:

²⁹ Framework of Analysis...

Շրջանակը ներառում է վարքագծի մոդելներ, հանգամանքներ կամ տարրեր, որոնք ստեղծում են նպաստավոր միջավայր զանգվածային ուժերի գործունեության համար: Դա պահանջում է մի շարք գործոնների գնահատում՝ կապված ոչ միայն զինված հակամարտությունների ռիսկի, այլև ցանկացած այլ իրավիճակի հետ, որը կարող է ստեղծել «նպաստավոր» պայմաններ զանգվածային ուժերի գործունեության համար: Դա ենթադրում է, օրինակ, պոտենցիալ ուժերի ներուժի ու դրդապատճառների ուսումնասիրություն, մարդու իրավունքների իրավիճակի մոնիտորինգ, առանցքային պետական ինստիտուտների ուժեղ և թույլ կողմերի գնահատում և այլն³⁰:

Ռիսկի գործոնները, իրենց հերթին, բաժանվում են ընդհանուր ռիսկի գործոնների և հատուկ ռիսկի գործոնների: Ընդհանուր գործոններն են.

Ռիսկի գործոն 1. Զինված բախումների իրավիճակներ կամ անկայունության այլ ձևեր

Ռիսկի գործոն 2. Մարդու իրավունքների միջազգային իրավունքի և մարդասիրական իրավունքի լուրջ խախտումների արձանագրում

Ռիսկի գործոն 3. Պետական կառույցների թուլություն

Ռիսկի գործոն 4. Շարժառիթներ կամ խթաններ

Ռիսկի գործոն 5. Զանգվածային ուժերի գործունեություն կատարելու կարողություն

Ռիսկի գործոն 6. Մեղմացուցիչ գործոնների բացակայություն

Ռիսկի գործոն 7. Նպաստավոր հանգամանքներ կամ նախապատրաստական գործողություններ

Ռիսկի գործոն 8. Հրահրող գործոններ³¹

Ընդհանուր ռիսկի գործոններն ուղղված են զանգվածային ուժերի գործունեության կատարման հավանականության բացահայտմանը՝ առանց հանցագործության տեսակը հստակ սահմանելու: Մոնիտորինգի նախնական փուլերում միշտ չէ, որ հնարավոր

³⁰ Dieng A., Welsh J.,...

³¹ Framework...

է պարզել հանցագործության տեսակը: Դա ավելի պարզ է դառնում, երբ զանգվածային ոճրագործությունների հանգեցնող գործընթացը սկսում է զարգանալ: Օրինակ, թույլ պետական կառույցները ամբողջ բնակչությանը կամ բնակչության կոնկրետ խմբին դնում են այդ հանցագործություններից որևէ մեկի վտանգի տակ: Բացի այդ, զանգվածային ոճրագործությունների տարբեր տեսակները կարող են իրականացվել զուգահեռաբար կամ հնարավոր է անցում մի ձևից մյուսը:

Բացի ընդհանուր գործոններից, Շրջանակում ներառված են նաև վեց լրացուցիչ ռիսկի գործոններ՝ միջազգային հանցագործության կոնկրետ տեսակին (ցեղասպանություն, մարդկության դեմ հանցագործություններ, պատերազմական հանցագործություններ) հատուկ երկուական գործոնով: Հատուկ ռիսկի գործոններն արտացոլում են հանցագործությունների իրավական սահմանումները: Դրանք ցույց են տալիս, որ յուրաքանչյուր հանցագործություն ունի առանձնահատուկ տարրեր և նախադեպեր, որոնք բնորոշ չեն մյուս տեսակներին:

Ցեղասպանություն

Ռիսկի գործոն 9. Միջխմբային լարվածություն կամ պաշտպանության տակ գտնվող խմբերի նկատմամբ խտրականության դրսևորումներ

Ռիսկի գործոն 10. Պաշտպանության տակ գտնվող խմբին ամբողջությամբ կամ մասամբ ոչնչացնելու մտադրության նշաններ

Մարդկության դեմ ուղղված հանցագործություններ

Ռիսկի գործոն 11. Քաղաքացիական բնակչության դեմ լայնամասշտաբ կամ համակարգված հարձակման նշաններ

Ռիսկի գործոն 12. Խաղաղ բնակչության վրա հարձակման ծրագրի կամ քաղաքականության առկայության նշաններ³²

Պատերազմական հանցագործություններ

Ռիսկի գործոն 13. Լուրջ սպառնալիքներ միջազգային մարդասիրական իրավունքով պաշտպանված անձանց համար

³² Նույն տեղում:

Ռիսկի գործոն 14. Լուրջ սպառնալիքներ մարդասիրական կամ խաղաղապահ գործողությունների համար

Շրջանակը կիրառելու ժամանակ հարկ է հաշվի առնել մի քանի կետեր: Առաջինը, պարտադիչ չէ ռիսկի բոլոր գործոնների առկայությունը՝ պնդելու համար, որ կա զանգվածային ոճրագործությունների իրականացման զգալի հավանականություն: Երկրորդ, որքան ավելի շատ են ռիսկի գործոնները (և ավելի մեծ է համապատասխան ցուցիչների թիվը), այնքան ավելի մեծ է զանգվածային ոճրագործությունների իրականացման ռիսկը: Բացի այդ, որքան ավելի մեծ է կոնկրետ ռիսկի գործոնի ցուցիչների թիվը, այնքան ավելի մեծ է այդ գործոնի նշանակությունն ու դերակատարությունը կոնկրետ իրավիճակի վրա: Երրորդ, ռիսկի գործոնները և ցուցիչները դասակարգված չեն, քանզի դրանց կարևորությունը հարաբերական է և կախված է կոնկրետ համատեքստից: Չորրորդ, դիտորդներն ու վերլուծաբանները պետք է լինեն ճկուն և Շրջանակում ներառված բոլոր տարրերը դիտարկեն ավելի լայն քաղաքական, սոցիալ-տնտեսական, պատմական և մշակութային վերլուծության շրջանակներում³³:

Առանձնահատուկ կարևոր է, որ Շրջանակը լինի կիրառվող համատեքստի նկատմամբ «զգայուն»՝ կոնկրետ միջավայրում դրա արդյունավետությունն ապահովելու համար: Դեպքի առանձնահատկությունների (հակամարտության տեսակը, հակամարտության կողմերը, հակամարտության մեջ ներգրավված ներգրավված երրորդ անձինք և այլն) վրա կենտրոնացումը պետք է լինի առաջնահերթություն: Ինքնորոշման հակամարտությունների դեպքում, երբ կա չլուծված կարգավիճակի խնդիր կամ միջազգային ճանաչման բացակայություն, այդ Շրջանակի սահմաններում վերլուծությունը կարող է ունենալ առանցքային նշանակություն: Ակնհայտորեն, քանի դեռ չկա միջազգային ճանաչում, մշտապես կլինի նոր ոճրագործությունների կատարման հավանականություն:

³³ Dieng A., Welsh J.,...

Շրջանակի սահմաններում շոշափելի արդյունքներ ապահովելու համար անհրաժեշտ է նաև արդյունավետ համագործակցություն համապատասխան միջազգային մարմինների և պետական իշխանությունների միջև: Պետական իշխանությունները, իրենց հերթին, պետք է սերտ համագործակցություն հաստատեն փորձագետների, ոլորտի մասնագետների, հասարակական կազմակերպությունների և այլոց հետ՝ ընթացիկ իրավիճակի վերաբերյալ համապարփակ զեկույցներ պատրաստելու և դրանք համապատասխան միջազգային մարմիններին ներկայացնելու համար: Այդ ուղղությամբ ամենօրյա աշխատանքն անհրաժեշտ նախապայման է անկախության ճանապարհին նոր ոճրագործությունների ռիսկերը նվազագույնի հասցնելու համար:

2020թ. Արցախյան պատերազմը զանգվածային ոճրագործությունների կանխարգելման շրջանակի համատեքստում

2020թ. սեպտեմբերի վերջին արցախա-ադրբեջանական շփման գծի երկայնքով սկսվեցին ծանր մարտեր: Դրա ռիսկերն առկա էին ինչպես Ադրբեջանի մշտական ռազմատենչ հռետորաբանության, այնպես էլ 44 օրյա պատերազմին նախորդած իրադարձությունների մակարդակում: Թեև հողվածի անմիջական նպատակն է ոչ թե ցույց տալ Լեռնային Ղարաբաղի հակամարտության սրման դեպքի համապատասխանությունը Շրջանակում ներառված գործոնների հետ, այլ ներկայացնել այն մեխանիզմը, որը կարող է կիրառվել ապագա ռիսկերը կանխելու համար, այդուհանդերձ նույնիսկ անգե՛ն աչքով կարելի է նկատել այդ համապատասխանության բարձր մակարդակը:

Լեռնային Ղարաբաղի հայերի ազգային-ազատագրական շարժման արդի փուլի մեկնարկից ի վեր Ադրբեջանը ձգտել է լուծել հակամարտությունը բռնի ուժով և մերժել է ցանկացած քաղաքական երկխոսություն: 1988թ. Սումգայիթում տեղի ունեցած հայկական ջարդերը դարձան Լեռնային Ղարաբաղի բնակչությանն ահաբեկելու ադրբեջանական քաղաքականության առաջին դրսևորում:

ներից, որին հաջորդեց հայկական ջարդերի ավիքը Ադրբեջանի տարբեր քաղաքներում³⁴:

1990-ական թվականներին Ադրբեջանի սանձազերծած ագրեսիայից հետո, ադրբեջանական կողմից հրադադարի ռեժիմի կանոնավոր խախտումների հետ մեկտեղ, 2016թ. և 2020թ. Արցախը ենթարկվեց երկու նոր ագրեսիաների (Ռիսկի գործոն 1): Դա ինքնորոշման հակամարտությունների լուծման պրակտիկայում աննախադեպ իրավիճակ է՝ ագրեսիաների քանակի, դրա մասշտաբի, շրջանակի և հետևանքների տեսանկյունից: Ինչպես 2016թ. լայնամասշտաբ հարձակման դեպքում³⁵, միջազգային համայնքը միաձայն արձանագրում էր, որ Ադրբեջանն է սանձազերծել 2020թ. պատերազմը: Տարիներ շարունակ Ադրբեջանը հետևողականորեն խախտել է 1994թ. հաստատված հրադադարի ռեժիմը, մերժել է ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահության կողմից առաջարկվող հրադադարի ռեժիմի խախտումների հետաքննության մեխանիզմների ներդրման և հրադադարի մոնիտորինգի ամրապնդման առաջարկները: Դրա վերջին վառ արտահայտումն է այն, որ 2020թ. սեպտեմբերի 25-ին Ադրբեջանը մերժել էր ԵԱՀԿ գործող նախագահի անձնական ներկայացուցչի շփման գծի մոնիտորինգ անցկացնելու վերաբերյալ խնդրանքը, ինչն ակնհայտորեն ցույց է տալիս, որ Ադրբեջանի նպատակն է եղել թաքցնել պատերազմ սկսելու իր ծրագրերը³⁶:

Ալիևի խոսույթում գերիշխող է ռազմական ճանապարհով հակամարտության լուծման վերաբերյալ ուժեղ հավատը. «ռազմական բյուջեն և մարտական կարողությունները գլխավոր դեր

³⁴ RA Ministry of Foreign Affairs, The War unleashed by Azerbaijan against Artsakh in 1991-1994, <http://www.nkr.am/en/azerbaijani-aggression>.

³⁵ The Azerbaijani Ambassador to Russia himself in an interview with radio station "Govorit Moskva" (Moscow speaking) and Television Network "Dozhd" on 2 April 2016 said that Azerbaijan had no other option than to solve the conflict by force. Radio station "Govorit Moskva" (Moscow speaking). April 2, 2016 <http://govoritmoskva.ru/news/74103/>.

³⁶ The statement of RA MFA on the Azerbaijani aggression against Artsakh, 28 September 2020, https://www.mfa.am/en/interviews-articles-and-comments/2020/09/28/mfa_statement_nk/10467.

կիսադան ... դարաբաղյան հակամարտության կարգավորման գործում»³⁷: Ալիևը ռազմական ուժի մեծացումը համարում է առանցքային Լեռնային Ղարաբաղի հակամարտության կարգավորման գործում. «Մենք շարունակելու ենք ընդլայնել մեր ռազմական կարողությունները: Վերջին տարիներին ձեռք բերած զենք-զինամթերքը վկայում է այն մասին, որ մենք կարող ենք լուծել ցանկացած խնդիր»³⁸: Բացի այդ, ի տարբերություն Հայաստանի առաջնորդների, Ադրբեջանի առաջնորդները երբեք տարբերակում չեն դնում հայկական պետության, Էլիտայի և հասարակության միջև³⁹: Ինչպես նշում է Թերզյանը, Ալիևի ռազմատենչ հռետորա-բանությունը և հայաստյաց դիրքորոշումը վերագրվում են այն հիմնական փիլիսոփայությանը, որը բնորոշ է ավտորիտար վարչա-կազմերին: Վերջիններս մշտապես «փնտրում են արտաքին թշնամի-ներ» ներպետական խնդիրներից ուշադրությունը շեղելու համար դեպի արտաքին համազգային սպառնալիքներ: Ավելին, արտաքին թշնամու դիմակայելու ահրաժեշտությունն օգտագործվում է որպես երկրում բազմակարծությունը և այլակարծությունը ճնշելու կատարյալ դրդապատճառ⁴⁰:

Հռետորաբանությունը տարածվում է նաև իրական գործողությունների վրա: Նախքան պատերազմի մեկնարկը բազմաթիվ փաստեր վկայում էին այն մասին, թե որքան հեռու էր գնացել այլատյացությունն ու աստելությունը հայերի նկատմամբ: Վերջին մի քանի տարիների ընթացքում Ադրբեջանում որպես ընդօրինակման կերպար էր ներկայացվում ադրբեջանցի սպա Ռամիլ Մաֆարովը՝ հանցագործ, ով ազգային աստելության հողի վրա կացնով գլխատել է հայ սպա Գուրգեն Մարգարյանին: 2010թ. և 2014թ. ադրբեջանական

³⁷ Azerbaijan's President Threatens War with Armenia via Twitter, <https://www.theguardian.com/world/2014/aug/07/azerbaijan-president-threatenswar-armenia-twitter>.

³⁸ President Aliyev says Azerbaijan ready for any scenario. 7 August 2014, <http://www.azernews.az/azerbaijan/69476.html>.

³⁹ **Terzyan A.**, The Role of Beliefs in Armenia-Azerbaijan Confrontation: A Glance into Presidents' Discourse, *Armenian Journal of Political Science*, 2016, 1, 4, 65-80.

⁴⁰ **Terzyan A.**,...

գերության մեջ սպանվել են Հայաստանի սահմանամերձ գյուղերի երկու բնակիչներ՝ Մանվել Սարիբեկյանը և Կարեն Պետրոսյանը: Ընդ որում, Կարեն Պետրոսյանը սպանվել է գերեվարման հաջորդ իսկ օրը: Ադրբեջանի ցանկացած քաղաքացի, ով հրապարակայնորեն հանդես է գալիս հոգուտ հայերի հետ որևէ հարաբերությունների հաստատման, ահաբեկման ու հալածանքի է ենթարկվում ադրբեջանական իշխանությունների կողմից, ինչպես դա տեղի ունեցավ ադրբեջանցի գրող Ա. Այլիսլիի հետ (Ռիսկի գործոն 2)⁴¹:

Վերոնշյալ ցանկը շարունակելի է և բավական երկար: Ադրբեջանում հայերի հանդեպ ռասիզմի և այլատյացության դրսևորումների առկայությունը հաստատվում է նաև միջազգային կազմակերպությունների մի շարք փաստաթղթերով, մասնավորապես ՄԱԿ Ռասայական խտրականության վերացման հարցերով կոմիտեի եզրափակիչ դիտարկումներում, Ռասիզմի և անհանդուրժողականության դեմ պայքարի եվրոպական կոմիտեի՝ Ադրբեջանի վերաբերյալ 2002 թ. հունիսի 28-ի, 2006 թ. դեկտեմբերի 15-ի, 2011 թ. մարտի 23-ի և 2016 թ. մարտի 17-ի զեկույցներում, Եվրոպայի խորհրդի Ազգային փոքրամասնությունների իրավունքների պաշտպանության մասին շրջանակային կոնվենցիայի խորհրդատվական կոմիտեի՝ Ադրբեջանի վերաբերյալ 2003 թ. մայիսի 22-ի և 2007 թ. նոյեմբերի 9-ի կարծիքներում⁴²:

2020թ. պատերազմից հետո Human Rights Watch-ը հրապարակեց զեկույց⁴³ ադրբեջանական ուժերի կողմից հայ ռազմագերիների իրավունքների խախտումների մասին՝ այն որակելով որպես զագրելի և ռազմական հանցագործություն: Կազմակերպությունն առանձնահատուկ ընդգծում էր, որ ադրբեջանական զինված ուժերը հայ գերիների նկատմամբ կիրառել են հարկա-

⁴¹ RA Ministry of Foreign Affairs, The Four-Day War of 2-5 April, 2016, <http://www.nkr.am/en/four-day-war>.

⁴² Նույն տեղում:

⁴³ Human Rights Watch, Azerbaijan: Armenian POWs Abused in Custody, March 19, 2021, https://www.hrw.org/news/2021/03/19/azerbaijan-armenian-pows-abused-custody?fbclid=IwAR3QjNdcbp9FRg1doCrFcL2dtuHV_PgaPAGnQqy4P2_OYG8Kf9BZhrqxz6E.

դրանք՝ ունենալով նրանց նվաստացնելու դիտավորություն: Զեկույցում վերահաստատվում է, որ Ադրբեջանը խախտում է միջազգային մարդասիրական իրավունքը՝ ընդգծելով այն փաստը, որ Ժնևի երրորդ կոնվենցիայով, որը կարգավորում է միջազգային զինված հակամարտություններում ռազմագերիների նկատմամբ վերաբերմունքը, արգելվում է գերեվարության մեջ գտնվող անձանց նկատմամբ դաժան վերաբերմունքը: Ադրբեջանը պետք է անհապաղ ազատ արձակի մնացած բոլոր ռազմագերիներին և տեղեկություններ տրամադրի այն զինծառայողների և քաղաքացիական անձանց գտնվելու վայրի մասին, որոնց իրավիճակն անհայտ է: Ավելին, զեկույցում վերահաստատվում է, որ ռազմական հարձակման սանձազերծողն Ադրբեջանն է:

Վերջին մի քանի տարիներին հրադադարի ռեժիմի հաստատման մասին եռակողմ պայմանագրի պարբերաբար խախտումները դարձել են ավելի լուրջ ինչպես իրենց բնույթով, այնպես էլ ծավալով: Ադրբեջանական իշխանություններն ամենաբարձր մակարդակով բազմիցս հրապարակավ հայտարարել են⁴⁴, որ ձգտում են բազմակի ռազմական գերազանցության՝ հանկարծակի հարված հասցնելու և Լեռնային Ղարաբաղը զավթելու նպատակով (Ռիսկի գործոն 7): Ավելին, ադրբեջանական կողմը գրեթե անմիջապես խախտել է հրադադարի կամ հումանիտար զինադադարի պայմանավորվածությունները, որոնք ձեռք են բերվել 2020թ. Պատերազմի ընթացքում: Այն ոչ միայն չի դադարեցրել ռմբակոծությունները, այլև հրթիռակոծել է նաև Հայաստանի տարածքը:

Ուճրագործները պետք է տիրապետեն բավարար ռեսուրսների, որպեսզի կարողանան իրականացնել լայնածավալ բռնություններ: Այդ ռեսուրսները՝ ներքին կամ արտաքին, միշտ չէ, որ հասանելի են, և դրանց ձեռքբերումը կարող է պահանջել տևական

⁴⁴ Speech by President of Azerbaijan Ilham Aliyev during the visit of operational conditions in frontline command control center, Official web-site of the President of Azerbaijan, November 12, 2016, <http://en.president.az/articles/21707>; «Речь президента Азербайджана Ильхама Алиева на общенародном веселье по случаю Новруз байрамы». Ադրբեջանի նախագահի պաշտոնական կայք, 19 մարտի 2016 թ., <http://ru.president.az/articles/19436>.

ժամանակ⁴⁵: 2016թ. Ադրբեջանի ռազմական ուժերի ձախողումը ևս մեկ անգամ ցույց տվեց, որ երկիրն ի վիճակի չէ ինքնուրույն հասնել ռազմական հաջողությունների: Բազմաթիվ փաստեր են ներկայացվել նաև այդ պատերազմին Թուրքիայի ուղղակի մասնակցության մասին՝ Ադրբեջանին տրամադրելով զինամթերք, հատուկ ջոկատայիններ, ռազմական գործողությունները կառավարող բարձրաստիճան զինվորականներ, ռազմական տեխնիկա, ԱԹՄ-ներ, Ֆ-16-եր, որոնք Ադրբեջանում էին թողնվել հուլիս-օգոստոսին անցկացված զորավարժություններից հետո: Թուրքիայի մասնակցության առանձնահատուկ դրսևորում է Միբիայից և Լիբիայից վարձկան ահաբեկիչների տեղափոխումը, որին անդրադարձել են ինչպես The Wall Street Journal-ը, Washington Post-ը, The National Interest-ը, ռուսական Коммерсантъ-ը, ֆրանսիական Le Figaro-ն և շատ այլ հեղինակավոր պարբերականներ, այնպես էլ Ֆրանսիայի, Ռուսաստանի նախագահները, Միացյալ Նահանգների պետքարտուղարն ու այդ երկրների համապատասխան կառույցների ղեկավարները (Ռիսկի գործոն 5, 7)⁴⁶:

Այդ տեսանկյունից առանցքային նշանակություն ունի Եվրախորհրդարանի 2020թ. (2020/2206(INI) Արտաքին և անվտանգային ընդհանուր քաղաքականության տարեկան զեկույցը, որում ԵՄ-ն հստակ արտահայտում է իր դիրքորոշումը պատերազմի և դրանում Թուրքիայի դերակատարության վերաբերյալ: Մասնավորապես, Եվրախորհրդարանը

- ...Վերահաստատում է իր վճռական աջակցությունը ԵԱՀԿ Մինսկի խմբին:

⁴⁵ Framework...

⁴⁶ Թորոսյան Տ., Դիվանագիտական լուծում կա. Լեռնային Ղարաբաղի հակամարտության կարգավորման հնարավորություններն ու հեռանկարները 2020թ. պատերազմից հետո, 13 դեկտեմբեր, 2020, Լույս հիմնադրամ,
<https://www.luys.am/img/artpic/small/ca628a9162b4fa5916e3%D4%B4%D5%AB%D5%BE%D5%A1%D5%B6%D5%A1%D5%A3%D5%AB%D5%BF%D5%A1%D5%AF%D5%A1%D5%B6%D5%AC%D5%B8%D6%82%D5%AE%D5%B8%D6%82%D5%B4%D5%AF%D5%A1.pdf>

- ...Ափսոսում է, որ ստատուս քվոյի փոփոխություններն իրականացվել են ռազմական ուժի կիրառմամբ, այլ ոչ թե խաղաղ բանակցությունների, վճռականորեն դատապարտում է քաղաքացիական անձանց սպանություններն ու քաղաքացիական օբյեկտների և ծիսական վայրերի ոչնչացումը, դատապարտում է հակամարտության ընթացքում կասետային սպառազինության կիրառումը:

- ...Ընդգծում է, որ Թուրքիան նպաստում է լարվածության մեծացմանը և ապակայունացնող ազդեցություն է գործում, ինչը սպառնում է տարածաշրջանային խաղաղությանն ու կայունությանը Արևելյան Միջերկրականում, Մերձավոր Արևելքում և Հարավային Կովկասում, ինչպես նաև նրա դերակատարությանը Սիրիայի, Իրաքի, Լիբիայի և Լեռնային Ղարաբաղի հակամարտություններում:

- ...Վճռականորեն դատապարտում է Թուրքիայի ապակայունացնող դերը, որն ավելի է թուլացնում Հարավային Կովկասի ամբողջ տարածաշրջանի փխրուն կայունությունը, կոչ է անում Թուրքիային զերծ մնալ որևէ միջամտությունից Լեռնային Ղարաբաղի հակամարտությանը, այդ թվում՝ Ադրբեջանին ռազմական աջակցության առաջարկությունը, զերծ մնալ իր ապակայունացնող գործողություններից և ակտիվորեն աջակցել խաղաղությանը, բացի այդ դատապարտում է Թուրքիայի կողմից Սիրիայից և այլ երկրներից օտարերկրյա ահաբեկիչների տեղափոխումը Լեռնային Ղարաբաղ, ինչը հաստատում է միջազգային սուբյեկտները, այդ թվում՝ ԵԱՀԿ Մինսկի խմբի անդամ պետությունները, ավստում է նրա պատրաստակամության համար ԵԱՀԿ Մինսկի խումբն ապակայունացնելու ուղղությամբ՝ հավակնություններ ունենալով հակամարտությունում ավելի վճռական դերակատարության»⁴⁷:

Ավելին, Ադրբեջանը պատերազմը սանձազերծել էր ՔՈՎԻԴ-19 համավարակի շրջանում (ՌԻսկի գործոն 8)՝ միտումնավոր մեծացնելով մահերի թիվը՝ ի հակադրություն համաշխարհային

⁴⁷ Թորոսյան Ս., Դիվանագիտական...; Report on the Implementation of the Common Foreign and Security Policy, Annual Report 2020 (2020/2206 (INI)), https://www.europarl.europa.eu/doceo/document/A-9-2020-0266_EN.html#title1.

զինադադարի մասին ՄԱԿ Գլխավոր քարտուղարի կոչերի և բոլոր իրավիճակներում ռազմական գործողությունների ընդհանուր և անհապաղ դադարեցման մասին Անվտանգության խորհրդի պահանջի⁴⁸: 2020 թ. մարտի 23-ին ՄԱԿ Գլխավոր քարտուղարը աշխարհի բոլոր անկյուններում գլոբալ հրադադարի մասին հրատապ կոչ արեց՝ շեշտելով, որ հակամարտության գոտիներում տառապող մարդիկ առանձնահատուկ խոցելի են համավարակի պայմաններում⁴⁹: Մարդու իրավունքների հարցերով ՄԱԿ-ի Գերագույն հանձնակատարը նույնպես ընդգծում էր համավարակի ընթացքում հանրային առողջության և կյանքի նկատմամբ պատերազմի անմիջական սպառնալիքները⁵⁰: 2020թ. հուլիսին ՄԱԿ Անվտանգության խորհուրդն ընդունեց 2532 (2020) բանաձևը, որում առանձնահատուկ ընդգծվում է, որ հակամարտային իրավիճակներում բռնության և անկայունության պայմանները կարող են սրել համավարակը, և, ընդհակառակը, համավարակը կարող է սրել հակամարտային իրավիճակների անբարենպաստ հումանիտար ազդեցությունը⁵¹:

Վերոնշյալն ապացույցների և գործոնների միայն մի փոքր մասն է, որոնք պետք է ներկայացվեն համապատասխան միջազգային մարմիններին՝ զանգվածային ոճրագործությունները մանրակրկիտ ուսումնասիրելու և հնարավոր ապագա դեպքերը կանխարգելելու համար:

⁴⁸ The Human Rights Defender of the Republic of Armenia, On the Azerbaijan's Crimes against Humanity in the Context of Human-Made Disaster During Covid-19 (The War against Artsakh and Armenia, September-November 2020), Ad hoc Public Report, Yerevan, 2021.

⁴⁹ Now is the Time for a Collective New Push for Peace and Reconciliation, <https://www.un.org/en/globalceasefire>.

⁵⁰ UN rights chief warns of possible war crimes in Nagorno-Karabakh conflict, 2 November 2020, <https://news.un.org/en/story/2020/11/1076672>.

⁵¹ UN Security Council Resolution 2532 (2020), [https://undocs.org/en/S/RES/2532\(2020\)](https://undocs.org/en/S/RES/2532(2020)).

Եզրակացություն

Հետազոտության արդյունքները ցույց են տալիս, որ

1. Ի տարբերություն սառըպատերազմյան և վաղ հետսառըպատերազմյան շրջանների, ներկայումս ձևավորվել են ավելի հստակ քաղաքականության շրջանակներ և սկզբունքներ՝ զանգվածային ոճրագործությունները կանխարգելելու և դրանց արձագանքելու համար: Միաժամանակ, արդյունավետ կանխարգելում իրականացնելու կամ դեպքին համարժեք արձագանքելու համար, քաղաքական կամքի հետ մեկտեղ, խիստ անհրաժեշտ է հակամարտության միջավայրի, դրա պատմության և այն գործոնների կամ իրադարձությունների խորքային ուսումնասիրություն, որոնք կարող են հրահրել զանգվածային ոճրագործություններ:
2. Կառավարությունները կարող են դիմել ոճրագործությունների զինված հակամարտությունների ժամանակ, եթե համարեն, որ խաղաղույթները բավական բարձր են և չկարողանան հաղթանակ տանել՝ ողջամիտ կորուստներով և ավանդական միջոցների կիրառմամբ: Խաղաղույթները գրեթե միշտ բարձր են ինքնորոշման հակամարտությունների ժամանակ, որոնց դեպքում տարածքի կարգավիճակի անորոշության պահպանումը կարող է առաջ բերել լուրջ սպառնալիքներ, մասնավորապես, մարդու իրավունքների ոտնահարման դեպքեր, մշակութային ճնշումներ, տնտեսական շահագործում, մշտական զինված բախումներ, համայնքի բնաջնջման սպառնալիք և այլն:
3. Ինքնորոշման հակամարտություններն ունեն մի քանի ընդհանուր հատկանիշներ, որոնք հարկ է հաշվի առնել զանգվածային ոճրագործությունների կանխարգելման կամ դրանց արձագանքման գործընթացի շրջանակներում. 1) գրեթե բոլոր ինքնորոշման հակամարտությունների դեպքում մետրոպոլիան ընդդիմացել է ինքնորոշման հայտ ներկայացրած ժողովրդի անկախացման տարբերակին, 2) հակամարտության որոշակի փուլում մետրոպոլիան կիրառել է

բռնություն ինքնորոշվող ժողովրդի նկատմամբ, 3) գրեթե բոլոր դեպքերում հակամարտության կարգավորմանը (անկախության ճանաչմանը) հանգեցրել են ոչ թե բանակցությունները, այլ միջազգային համայնքի ճնշումները:

4. Զանգվածային ոճրագործությունների կանխարգելման վերլուծության շրջանակի օգտագործումը կարող է էական ազդեցություն ունենալ ապագա հանցագործությունների կանխարգելման գործընթացի վրա: Դրա արդյունավետ կիրառելիությունն ապահովելու համար նախ անհրաժեշտ է հաշվի առնել կոնկրետ դեպքի առանձնահատկությունները (հակամարտության տեսակը, հակամարտության կողմերը, ներգրավված երրորդ կողմերը և այլն): Երկրորդ, տեղական իշխանությունների և համապատասխան միջազգային մարմինների միջև պետք է հաստատվի արդյունավետ համագործակցություն: Տեղական իշխանությունները, իրենց հերթին, պետք է սերտ համագործակցություն հաստատեն ոլորտի փորձագետների և մասնագետների հետ՝ անհրաժեշտ տվյալներ հավաքագրելու և ընթացիկ իրավիճակի վերաբերյալ համապարփակ զեկույցներ պատրաստելու համար:
5. Հողվածում ներկայացված են փաստերի և վկայությունների միայն չնչին մասը, որոնք ակնհայտորեն ցույց են տալիս 2020թ. ադրբեջանական կողմի սանձազերծած զանգվածային ոճրագործությունների բարձր մակարդակի համապատասխանությունը Շրջանակում ներառված ռիսկի գործոններին: Քանի դեռ Արցախի Հանրապետությունը միջազգայնորեն չի ճանաչվել, մշտապես կլինեն նոր հանցագործությունների կատարման ռիսկեր: Ուստի, նախքան ճանաչման գործընթացի հաջող ավարտը, անհրաժեշտ է ամենօրյա աշխատանք բոլոր ուղղություններով՝ ապագա ոճրագործությունները կանխելու համար:

Prevention of Atrocity crimes and Self-Determination Conflicts

MARINE KIRAKOSYAN

Brusov State University

The article analyzes the link between atrocities and armed conflicts. It argues that the open status question and the lack of international recognition sharply increases the risk of the commitment of these crimes in case of self-determination conflicts. Thus, the mechanisms of risk assessment, in particular the Framework of Analysis for Atrocity Prevention, could be very useful for early detection and prevention of atrocities. The mechanism could serve as an effective tool in case of the Nagorno-Karabakh conflict. As long as there is no international recognition, there will always be a probability of new atrocities. The article concludes that for the Framework to effectively serve its purpose, the analysis must be context-sensitive and there should be a strong collaboration between international investigative bodies and local authorities and between local authorities and professionals of the field.